

## ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Ճաղկաբեր համայնքի ավագանու հերթական նիստի և համայնքային նշանակություն միջոցառումների (ՏԻՄ-երի առուլիսների, հանրային քննարկումների) վերաբերյալ**

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ճաղկաբեր	Ավագանու հերթական նիստ	19.02.2020թ.	11:00	<b>Ճաղկաբերի</b> համայնքապետարան (գ.Ճաղկաբեր, 2 փողոց, 12 շենք)

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020թ.  
ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ծաղկաբեր համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 19-ի հերթական նիստի օրակարգը

Օրակարգ

Ծաղկաբեր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման հնգամյա ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին

Զեկ. Ն. Հովհաննիսյան

**ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ծաղկաբեր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2. Հաստատել 2019 թվականի Ծաղկաբեր համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ  
 ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ծաղկաբեր համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրով 2019 թվականին նախատեսվել են մի շարք միջոցառումներ, որոնք իրագործվել են տարվա տարբեր ժամանակահատվածներում և դրանց իրականացման ուղղությամբ համայնքապետարանը կատարել է զգալի աշխատանք:

2019 թվականին համայնքի բյուջեի ֆինանսավորմամբ կատարվել է 35427.6 հազ. դրամի աշխատանքներ՝ համայնքային կյանքի տարբեր ոլորտներում, բարեգործների ֆինանսավորմամբ համայնքում իրականացվել է 8256.7 հազ. դրամի աշխատանք՝ «Աբգարի Աղբյուր» և «Կոտեմոտի Աղբյուր» ջրագծերի կառուցման համար:

Ստորև բերվում է աղյուսակ կատարված աշխատանքների անվանումներով, ծրագրով նախատեսված փաստացի կատարված ցուցանիշներով:

Աղյուսակ 1

Ծաղկաբեր համայնքի 2017-2021թթ.զարգացման հնգամյա ծրագրով 2019 թ. համայնքի բյուջեի և այլ աղբյուրներից ֆինանսավորմամբ նախատեսված աշխատանքների կատարման

Կատարած աշխատանքի անվանումը	Ծրագրով նախատեսված /հազ. դրամ/	Փաստացի կատարված /հազ. դրամ/
1.Ապարատի պահպանություն	16838.0	16671.0
1.Նախադպրոցական կրթություն	7050.0	6188.0
2.Համայնքի աղբահանություն	960.0	960.0
3.Ճանապարհների պահպանություն և շահագործում	1050.0	729.9
4.Աղետների ռիսկերի նվազեցում	300.0	199.6
5.Հայրենական Մեծ Պատերազմի հուշարձանի նորոգում	640.0	40.0
6.Խմելու ջրի ջրամատակարարում	1400.0	1349.8
7.Փողոցների լուսավորություն	1250.0	1224.0
8.Միջնակարգ կրթության խթանում	900.0	898.8
9.Բարձրագույն կրթության խթանում	700.0	602.0
10.Սոցիալական պաշտպանություն որից՝ .Հարազատների հուղարկավորության օգնություն	300.0	300.0
Անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն	1300.0	995.0
11.Շենք շինությունների նորոգում	1350.0	992.8

Աղյուսակ 2

**Ծաղկաբեր համայնքի սեփական եկամուտների հավաքագրման  
ցուցանիշները**

	Սեփական եկամուտ	Ծրագրով նախատեսված /հազ դրամ/	Փաստացի կատարած /հազ. դրամ/
1	Գույքահարկ	3873.3	5360.7
2	Հողի հարկ	4034.0	5167.8
3	Վարձակալություն	921.0	1038.0
4	Տեղական տուրքեր	42.0	136.0
5	Տեղական վճարներ	2000.0	2314.6
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>10870.3</b>	<b>14017.1</b>

2019 թվականի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 128.9 % -ով